

2021
դորս

դմտուցոյ
դոհտոցի
վոյրս



դոսլուսվո
դվոսլուսիւոչո դ
դոհոսլուսի ոսոյ
դվոսլուսոցո



ուոցիսնսր վոգոնսիւիւ

ՂՎՂՈՎՉՎ ՆԳՉՎԱՌ

ոցիսիոց

ԻՍՆԱՐՈՏՎԻ ՂՎՔՈՒՇՈՇՎՌ



ԲՈՒԲՈՒՄԵԱՆ ՓԻՐՈՒՄԵԱՆ (ԱՄՆ)

Մերծավորարևյան լեզուների և մշակույթի
գիտությունների դոկտոր

«ԱՍՏՈՒՎԾ ԴՎՊԱ, ԴԻՈՒՆ ԱԵՉ ԴՎԱՅԷ. ԱԵՐ ԴՎՅՈՒԸՏԱԾ ՏԵՂԸ ԹՈՒՐՔԵՐԸ ԹՈՂ ՉԳՏՆԵՆ. ԱԵՎՔԻՎԹԷՆ ԱՉԱՏԷ ԱԵՉ, ԱՄԷՆ»¹

Սա միակ աղօթքն էր որ փոքրիկ Մուշեղը կրկնեց միշտ, կրկնեց Սիմկի Հիսարի եկեղեցու «լուռ կամարներուն տակ», ուր վերապրած ու տուն վերադարձած «երերացող քանի մը ստուերներ, որոնք անդիի աշխարհէն այցելուներ ըլլան կարծես», երեկոյեան աղօթքի ժամերին իրենց աղօթքն էին բարձրացնում առ Աստուած: Պատարագ չկար: Քահանան չէր վերադարձել: «Դիւրին չէ նոր աղօթք ստեղծել», մտորում էր Մուշեղը, նոյնիսկ, երբ չորս տարի ճամբաներում դեգերելուց յետոյ ընտանիքի մնացորդացի հետ այժմ իր ծննդավայրում էր, Սիմկի Հիսարում, ու ապահով:

Իր այս աղօթքի մէջ փոքրիկ Մուշեղ ճենտերեճեանը խտացնում էր մի ամբողջ ներաշխարհ, որ իրն էր լինելու ցկեանս՝ «հոգիիս վրայ խարանի պէս նստած կը մնան թրքերէն երկու բառեր, դժոխքէն ելած եւ դժոխք առաջնորդող երկու ահատոր բառեր, որոնք մինչեւ այսօր դող կը պատճառեն ջիղերուս» (էջ 11): *Սեֆերպիրիթ* եւ *սեւքիաթ*, իրենց սովորական իմաստով՝ տեղափոխութիւն եւ զօրահաւաք, որոնք երիտթուրք կառավարութեան մեղմասութիւնն էին (euphemism) քօլարկելու համար իրական նպատակը՝ ջարդ, կոտորած, տեղահանութիւն՝ բնաջնջումը Օսմանեան կայսրութեան բնիկ ժողովրդի, հայ ժողովրդի: Երկու բառեր, որպէս ցուցանիշը (signifier)՝ նրա մտահորիզոնում անջնջելիօրէն դրոշմուած սարսափելի պատկերների, յատկանշեալ

1 Մ. Իշխան, *Մնաս բարով մանկութիւն, Բէյրութ, 1974, էջ 15: Յղումները նշուած են փակագծի մէջ:*

